Գործ հմ. ԵԴ2/43368/02/23

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

29.01.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով հայցվորներ «Հ.Հ.Ն.Մ.Ս.» ՍՊԸ-ի և «Տեխնիկ Լիֆտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Պավել Թադևոսյանի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվորներ «Հ.Հ.Ն.Մ.Ս.» ՍՊԸ-ի և «Տեխնիկ Լիֆտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Պավել Թադևոսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ վճարման պահանջագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի 20.12.2023թ. որոշմամբ վերադարձվել է:

Հայցվորների ներկայացուցիչը հայցադիմումը կրկին դատարան է ներկայացրել եռօրյա ժամկետում, որը դատավոր Ա. Պետրոսյանի աշխատակազմին է հանձնվել 24.01.2024 թվականին:

Հայցվորների ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/43368/02/23 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. մարտի 12-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ